



# Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016

MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Առաջնորդ

Bishop Torkom Manougian, Primate

Թիւ 17004  
Փետրուար 15, 1967

Հոգեշնորհ  
Տ. Միւռոն Ս. Վրդ. Կրճիկեան  
Հոգեւոր Հովիւ Ա. Փրկիչ Եկեղեցւոյ  
եւ Նախագահ Միական Խորհուրդի  
Ուստր.

Սիրելի Հայր Միւռոն,

Ստացած ենք 1967 Փետրուար 1 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Յունուար 28ին գումարուած Ձեր Միական ժողովին մէջ կատարուած է Միական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Միական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Այս առիթով կը յայտնենք թէ կարգ մը համայնքներ մօտէն չեն հետեւած Թեմական Կանոնադրութեան յօդուածներուն, եւ պակասաւոր տեղեկութիւններ ղրկած են Առաջնորդարան: Ուստի, այժմէն կ'ազդարարենք որ յառաջիկային կարեւորութեամբ նկատի պիտի առնենք գործադրութիւնը Կանոնադրութեան տրամադրութեանց:

Հանեցէք փութով Առաջնորդարան ղրկել նորընտիր Դիւանի անդամոց անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով Միական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ա. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Տիարք՝ Ճան Թորոմանեան  
Ջաւէն Գասպարեան  
Սուրէն Խաչատուրեան  
Բաճնի Եաղճեան  
Վահան Արոյեան  
Հէրրի Սահակեան